ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՄՕՊՁԲԸ-ԳՀԱՊՁԲ-2018/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Ք. Մարտունի 12.06.2018թ. ժ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Հովհաննիսյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Անի Կարապետյան

Անուշ Սարգսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Օֆելյա Մելքոնյան

Քնքուշ Քիշմիրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Սրիարփի Հովհաննիսյան

1.Գնահատող հանձնաժողովը որոշեց

Քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ հարցում ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրել, ուստի ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ,,Գնումների գործընթացի կազմակերպման,, կարգի 44-րդ կետի համաձայն, եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տեղեկատվություն չի տրամադրվել՝ մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում է իրականությանը համապատասխանող:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2107թ. N 526-Ն որոշմամբ հաստատված ,,Գնումների գործընթացի կազմակերպման,, կարգի 46-րդ կետի դրույթներով՝ և հիմք ընդունելով ,, Վիոլա,,ՍՊԸ , ,,Դելտա , ՍՊԸ-ների ներկայացրած հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ նշված կազմակերպություններին ճանաչել ընտրված մասնակից:
Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից , ուստի հիմք ընդունելով ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ընտրված մասնկիցների հետ պայմանագիր կնքելու գործընթացը սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից . հետո:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

3.Գնահատող հանձնաժողովը որոշեց

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին ք. Մարտունի գետափնյա 2/18 հասցեով:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	Աշոտ Հովհաննիսյան	
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Անի Կարապետյան	
	Անուշ Սարգսյան	
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Օֆելյա Մելքոնյան	
	Քնքուշ Քիշմիրյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	Սիրարփի Հովհաննիսյան	